Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 159 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՇԱՐԺԱԿԱՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրով նախատեսված է տեղադրել 7 հատ 1 կՎտ անվանական հզորությամբ, ցանցի հետ հիբրիդ դիսկրետ փոխանջատվող, շարժական արևային էլեկտրական կայաններ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս (2 հատ կայան), Սիսիան (1 հատ կայան), Կապան (Դավիթ Բեկ բնակավայր, 1 հատ կայան), Գեղարքունիքի մարզի Վարդենիս (2 հատ կայան) , Վայոց ձորի մարզի Եղեգիս (1 հատ կայան) համայնքներում, որոնք համարվում են սահմանամերձ համայնքներ: Միջոցառումների իրականացման արդյունքում համայնքները կտնտեսեն գումարներ իրենց էներգետիկ ծախսերից, ինչպես նաև էներգետիկ ենթա-կառուցվածքների վնասված լինելու դեպքում կունենան կուտակված հոսանք՝ ապահովելու կարևորագույն շենքերում հոսանքի առկայությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի Գլոբալ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) Փոքր դրամաշնորհների ծրագիր (գտնվելու վայրը՝ քաղ. Երևան, Ադամյան 14, ՀՎՀՀ՝ 02522088)
4.	Ծրագիրը կատարողը	«Կանաչ տեխնոլոգիաների հայկական կենտրոն» հիմնադրամ (գտնվելու վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Կարեն Դեմիրճյան 3-րդ նրբ. տուն 3, ՀՎՀՀ՝ 05543384)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան (Դավիթ Բեկ բնակավայր), Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքներում, սոցիալական բնագավառ:

6.	Ծրագրի բյուջեն	5,395,833 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս, Սիսիան, Կապան (Դավիթ Բեկ բնակավայր), Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մարտի 5-ից մինչև նոյեմբերի 30-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	7 հատ 1 կՎտ անվանական հզորությամբ ցանցի հետ հիբրիդ դիսկրետ փոխանջատվող արևային էլեկտրական կայանների (համալրված MUST (HBP18-2024) ինվերտորով՝ 2,560 Վտ/ժ մարտկոցով), տեղադրման աշխատանքների իրականացում՝ 5,395,833 դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մարտի 5-ից մինչև նոյեմբերի 30-ը
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի իրականացման ընթացքում ձեռք են բերվելու հետևյալ ծառայու-թյունները՝ 7 հատ 1 կՎտ անվանական հզորությամբ ցանցի հետ հիբրիդ դիսկրետ փոխանջատվող արևային էլեկտրական կայաններ (համալրված MUST (HBP18-2024) ինվերտորով՝ 2560 Վտ/ժ մարտկոցով) ընդհանուր՝ 5,395,833 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրով կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթա-կառուցվածքների նախարարություն և տեղական ինքնակառավարման մարմիններ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով լիազորված մարմին հաշվետվությունների ներկայացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ